

շարք է, որ տրվում է նոր կյանքի շնորհիվ կանգնած նորահարսին: Համեմատաբար լավ են պահպանված հրաժեշտի և թագնորամորս ուղղված երգերը: Գույն անցյալ դարում լոռու հարսանեկան ծեսի համալիրում ծիսային երգեր կղեղ են: Տարակուսանքի զգացումը չեն փարատում Ե. Լալայանի գրի առած և հրատարակված օրինակները, որոնք ավելի սոցիալական, քան ծիսային բնույթի են: Հավանաբար այս դեպքում առկա է ժանրերի կերպարանափոխման, փոխանցման, հարակցումների, փոխազդեցությունների և ժանրային անցումների երևույթը, որն արտահայտվում է այդ կարգի երգերը կենացների ժամանակ բարեմադթություններով, օրհնանքներով փոխարինելու երևույթով: Նույնը դժվար է ասել սգո երգերի մասին, որովհետև այս դեպքում նմուշների սակավաթիվը լինելը պայմանավորված է առավելապես զրանցման դժվարությամբ: Միսային այլ կարգի երգերից այսօր հնարավոր է գրանցել անձրև առաջացնող «նուրիների» երգեր, որովհետև մեծահասակները դեռևս հիշում են ինչպես այդ, նույնպես և «նուրիների» արական գուգակիցը հանդիսացող «Ակլատիզի» ծեսը:

Լոռու ազգագրական շրջանում գրի առած թե՛ գյուղական, թե՛ քաղաքատիպ հարսանեկան ծեսը արարողությունների հաջորդականությամբ ու բնույթով խիստ համահնչյուն է ընդհանուր հայոց հարսանեկան ծեսին: Ինչ-որ շափով այդ ծեսի համար նորություն են թափառականացված գործողությունների այն տեսակները, որոնք ասացողները «օյիններ» են անվանում: Այդ «օյիններից» մի քանիսում վերապրուկային ձևով պահպանված են հնագույն ժամանակներից

փոխանցված պաշտամունքային երևույթներ: Հետաքրքիր մի սովորույթ գոյություն ունի Թումանյանի շրջանի գյուղերի նախահարսանեկան արարողությունների մեջ: Աղջկա ծնողների համաձայնությունը ստանալու համար փեսացուն կացնի մի հարվածով պիտի ճեղքի հաստարձակ լոճը: Վերջինիս «փեսի կոճը» են ասում, որ նախօրոք պատրաստված է լինում այդ նպատակի համար: Եթե փեսացուն հաջողացրեց այդ անել, ստանում է աղջկա ծնողների համաձայնությունը: Պատահում է և այսպես, եթե տարիներ անցնում են, բայց աղջկան ուղղակի չեն գալիս, գիշերով տան մեծ կինը կոճը հեռացնում է, տանում է զցում մոտակա ձորը: Երբ այն խանդարիչ դեր չխաղա հարսանքից աղջկա կյանքում:

Ի մի բերելով լոռու պատմաազգագրական շրջանի բանահյուսության արդի վիճակի մասին մեր խոսքը՝ ասենք, որ այսօր շրջանում բանահյուսական շատ տեսակներ քայքայման և աստիճանաբար անհետացման ընթացքի մեջ են: Շրջանի հոգևոր մշակույթի բաղմամբիվ նմուշներ ներկայումս վեր են ածվում թանգարանային արժեքների, բանավոր խոսքերով հատի տարրերը ներթափանցում են գրականության մեջ, ժողովրդական մելոսն ու պարը անցնում են ինքնագործ ու պրոֆեսիոնալ արվեստի ոլորտները: Այս անխուսափելի ընթացքը, իհարկե, տալիս է անտարակուսելի կորուստներ, բայց միաժամանակ վկայում է այն մասին, որ ժողովրդի ընդհանուր մշակույթը բարձրացել է որակական մի այլ աստիճանի:

Ք. Լ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԲԱՐՈՅԱԽԱՏԱԿԱՆ ՄՏՔԵՐԸ ՀԱՅ ՏԱՊԱՆԱԴՐԵՐՈՒՄ (XIX ԴԱՐ)

Մարդու խոհերն ու մտորումները, ինչպես հայտնի է, փորագրվել են հուշարձանների, դամբարանների վրա՝ ի տես ապրողների: Այդ հուշարձանները և դրանց վրա փորագրված ստեղծագործությունները ինքնանպատակ չեն եղել: Հանգուցյալների հիշատակին կերտված դամբարանները, շիրմաքարերը, մատուռները «կանգնած են միշտ ոչ թե մեռնողին հիշատարկի հարգելու համար միայն, կամ անոր անունը հավերժացնելու, այլ ապա եկողներուն ու ողջ մնացածներուն խրատատու ըլլալու նաև...»¹ Կյանքին հրաժեշտ տվողը, դիմելով իր շիր-

մին այցի եկողին, ասում է, որ մահը հավասարապես վերաբերում է բոլորին, առանց բացառության, լինի դա ազնվազարմ, թե հասարակ ծագում ունեցող անձնավորություն և ինչպիսին էլ լինի նրա դիրքը հասարակության մեջ: Ո՛չ մարդ անհատի կատարած գործերը, ո՛չ էլ նրա բարձր դիրքը չեն կարող նրան արտոնել հավերժ ապրելու իրավունք:

Ինչ խնդում է սա աշխարհին,
Որ քիչ ատեն կայ եկողին:
Խրատ կու տամ ես ճահիլին՝
Քարըս է նըշան իրենց աչքին:

Եվ կամ՝

Ով մարդ, ո՛ւր ես, գործքդ ի՞նչ է,
Եկար աշխարհ՝ մահըդ հետդ է:

1 Ե. Զեյնալի Քյոմուրճյան, Պատմություն Ստամպոլու, հատ. 1, Վիեննա, 1913, էջ 392:

Ինչ սէրմիէ առած Լս նէ՝

Լեցուն շահը տալու տեղն է՝²

Մարդ արարածը ինչքան էլ որ ապրի, վաղ
թե ուշ պետք է հրաժեշտ տա կյանքին, ծնված
օրից մահն անբաժան է մարդուց։

Թէպէտ ուրիշներն վեց ամօք ապրեցայ,
Աշխարհին պէսպէս փորձերը տեսայ,
Եկեղեցական գործքերու մտայ,
Կերպ-կերպ բարեքներ գործել ցանկացայ,
Բայց, ավաղ, եղբարք, հասաւ իմ վերա
Մահուան մանգաղը, հնձեց զիս ահա՜։

Աշխարհին հրաժեշտ տվողի համար միակ
միջոցարարքը մնում է ոչ թե զանազան միջոց-
ներով ձեռք բերած հարստությունը, կալվածք-
ները, նվաճած փառքը, այլ իր ժառանգը, քա-
նի որ մարդու հիշատակը ապրում է ժառանգի
մեջ։ Եվ այսպես, սերնդափոխության մեջ է
նա տեսնում իր կյանքի հարատևությունը, ապ-
րելու իմաստը։

Միայն յիշատակս որդուցս կը մնայ,
Թէպէտ ես մեռայ, մարմնով հեռացայ,
Բայց իմ որդուվըս ողջ եմ յարեկայ...
Անոնք մնացին փառք զարմիս անմահ...⁴

Որոշ շահածո տապանագրերում մահվան ի-
րողությունը սարսափելի չի պատկերված, մարդ-
կային անհատը թեև ընդունում է մահվան փա-
ստը գտնում է, որ խույս տալ նրանից անհնար
է, սակայն չի ողբում իր կորստյան համար։
Սերունդների հիշողության մեջ մնալու ցանկու-
թյունը կարծես մարդուն ապրեցնում, քաջալի-
րում է, նրան անխղճիորեն կապում աշխարհի
հետ, որքան էլ որ կյանքը լինի դառնություն-
ներով լի, հոգսերով ու փորձություններով լի,
թրքան էլ որ այն անցողիկ լինի։

Տապանագրերից մեկի մեջ ոչ միայն տրտունջ
է հայտնվում, որ մահվան ուրվականը որպես
Քիսեո պարկեան մկրատա այցի է գալիս ապրո-
ղին տարբեր ժամանակ, զանազան պարագանե-
րում, մեկին հնձում է ծաղիկ հասակում, մյու-
սին՝ խոր ծերության կամ թշնամու դեմ
մարտնչելիս, մեկ ուրիշին էլ՝ պանդխտության
ու թշվառության մեջ։

Մի այլ տապանագրում հանգուցյալը «երջա-
նիկ հայր» է համարում իրեն, որովհետև վեց
զավակներ է պահել մեծացրել։ Նա նվիրված է
եղել իր գործին, իր հավատքին ու կոչումին։

Նա ապրել է «հոգույ, մարմնույ սուրբ պարտ-
քերուն» նվիրված, բայց դարձյալ «մահվան
խորշակը» իր բոլոր հույսերն ու երազանքները
փշրել է անգթորեն։ Եվ ուրեմն ընտանիքին
ազնվորեն նվիրված լինելը, առաքինի կյանք
վարելն անգամ երաշխիք չին անմահություն
նվաճելու համար։

Ոչ մեծ համբավ, ոչ ճոխություն քեզ կ'օգտեն
Անվերջ ծովու յաւիտենին հայոցին՝⁵

Չկա անդրշիրիմյան կյանք, չկա դրախտ, մա-
հից հետո ոչինչ չի մնում։

Անցավորիդ այս մահարձան կանգնեցաւ,
Չըլայ մտքէդ հանես մահն և դատաստան։
Մի մ'ալ քեզ կը բացվի այս ծառաստան
Եւ կը յանգին սուտ բերկրանքներ,
Վիշտ ու ցաւ։⁶

Կամ մի այլ տեղ։

Ձի ամենեքեան դիրաւ անցանեն,
Դիրաւ եղծանին, յոչինչ ելանեն։⁷

Սրան ի հակադրություն, սակայն, այլ տա-
պանագրերում շոշափվում է հանդերձյալ աշ-
խարհի և աստծուն ապավինելու գաղափարը
և որ կորստից խուսափելու ու հավիտենաբար
ապրելու միակ ճանապարհը բարեգործությունն
է, մեղքից հեռու մնալը։ Տապանագրի հեղի-
նակը մեռնողի անունից խրատ է կարդում
ապրողներին, որ յուրաքանչյուր մարդկային
էակի համար պետք է լինի մի նպատակամղում՝
մարդկային երջանկության հասնելու ձգտում։
Իսկ մարդը, երջանիկ կարող է լինել միայն
այն ժամանակ, եթե իր կատարած գործերով
նեցուկ ու հենարան դառնա նրանց, ովքեր դրա
կարիքն են զգում։

Չանալ պարտի մեզ ըստ կարի մերում՝
Ձրգել զայն ի ձեռք գործով լաւագոյն.
Որչափ ապրեսցիս՝ շունիս դու վախճան.
Կըշոեա դու և տես իբրեւ բանական։⁸

Եվ քանի որ կյանքն անցողիկ է, ապա մար-
դու ձեռքով ստեղծված արդյունքները մնալու
են աշխարհին, ապրող մարդկանց, ուրեմն նա
պարտավոր է իրեն դրսևորել այնպես, որպեսզի
իր կատարած գործը, հիշատակը շնորհակալի։

5 Նույն տեղում, էջ 19։

6 Նույն տեղում։

7 Նույն տեղում, էջ 231։

8 Նույն տեղում։

2 «Բազմավեպ», 1929, էջ 20։

3 Նույն տեղում, էջ 22։

4 Նույն տեղում։

Մարդիկ կու գան, մարդիկ կերթան,
Իսկ բրածնին միշտ կը մնան:
Այսպէս այս մարդիկ կը մեռնին,
Այլ բարի գործ մեր չի թողմին⁹:

Հայ վիճագիր բանաստեղծութեան հերոսը հորդորում է ապրողներին, որ նրանք ազնիվ լինեն, սիրեն ճշմարտութիւնը, հեռու մնան ստից ու կեղծիքից, քանան իրենց հոգիները մաքուր պահել մեղքերից և որ կարևորն է՝ նեղուկ ու հենարան լինեն կարոտյալներին, սրբութեամբ կատարեն տիրոջ պատվիրանները, կարճ ասած՝ կատարյալ մարդու կոչումը պետք է լինի հավատարիմ մնալ ազգային ու կրոնական ավանդներին: Հետևապես շփոթելով այս ճշմարտութիւնը, մարդը պետք է միայն մի նպատակ ունենա՝ ձգտի արժանանալ «բարեբարի», այսինքն աստծո «տեսութեանը»:

Ճշմարտութեան սիրող եղիր,
Սըտութենէ դու հեռացիր.
Ատ աշխարհըդ անցաւոր է,
Հոգիդ մեղաց մաքուր պահէ,
Կարօտելոց շնորհ արէ,
Տիրոջ խոսքը դու կատարէ¹⁰:

Կամ՝

Մաղթեսցուք յաւետ ի բարեբարէն՝
Զթողուլ մեզ դուրկ յիւր տեսութենէն¹¹:

Եվ կամ՝

Խըրատըս ամենուն՝ գործեցեք բարիք.
Սիրեցեք աստված, կըլլաք երջանիկ¹²:

Մարդկային կյանքը միշտ էլ հարափոփոխ է ու անկայուն: Երկրային բարեքները հավասար չեն բաշխվում բոլորին. մեկը վայելքների ու ցոփութեան մեջ է վատնում իր կյանքը, մյուսը՝ տառապանքների և աղքատութեան: Սակայն հասարակական կյանքում ինչ վիճակի մեջ էլ որ գտնվելիս լինի մարդը, վաղ թե ուշ հրաժեշտ է տալու աշխարհին՝ վայելքներին ու տառապանքներին: Հետևապես, բանական մարդը չպետք է մոռանա իր անելիքը, իր մշտնջենական հանգրվանը: Նա չպետք է գոռոզանա, եթե հաջողակ է կյանքում, չպետք է արհամարհանքով նայի նրանց վրա, ովքեր ձախողակ են եղել, քանի որ վաղ թե ուշ կգա այն պահը, երբ

անխուսափելի մահը հավասարութեան է դնել
յու բոլորի միջև:

Նս ալ էի քեզի պէս,
Դուն ալ կ'ըլլաս ինծի պէս.
Ասիկա միշտ մտածես,
Եւ եղիցի տէր ընդ քեզ¹³:

Կամ՝

Երբեմն մարդ էի ես ձեզի պէս,
Այժմըս եղայ ես հողի պէս.
Ես չի պիտի ըլլամ ձեզի պէս,
Դուք պիտի ըլլաք ինձի պէս¹⁴:

Այս տառապանքներում ևս ժխտվում է հանդերձալ կյանքի գոյութեան փաստը, սրանց գաղափարը միանգամայն հակադրվում է այն վիճագիր բանաստեղծութիւնների արտահայտած գաղափարին, որոնց մեջ դրվատվում է հանդերձալ կյանքը, կրկին հարութեան առնելու երազանքն ու փափագը:

Վիճագիր բանաստեղծութեան մեջ ձաղկվում է փառասիրութիւնը և արծաթասիրութիւնը: Նա, ով ցանկանում է ձեռք բերել «փառք անսահման», պետք է հեռու մնա կյանքի ամեն տեսակ մոլորութիւններից: Միայն նա կարող է տիրանալ երկնային փառքին, ով փառասեր չէ և ունի «հաւատք ու սէր»: Նման ստեղծագործութիւնների մեջ մերժվում են նաև երկրային կյանքի անցողիկ փառքերն ու գանձերը:

Գանձէ դու քեզ գանձ,
Երկինքը առանց.
Հոն փառք անվախճան
Գտնաս անխափան
Թէ չես փառասէր,
Ունիս հաւատք, սէր
Եւ յուս հաստատուն՝
Քեզ երանութիւն...¹⁵:

Իմեկով ասորդներին՝ բանաստեղծութեան հերոսը ի ցույց է դնում իր վիճակը, սակայն միաժամանակ շեշտում է, որ ապրող սերունդները չպետք է անտարբեր ձևանան կյանքից հեռացողների հիշատակի հանդեպ: Բանական մարդը պարտավոր է թեկուզ «մի հայր մերիւ ողորմիս» տալ նրանց, ովքեր ինչ-ինչ պարագանքներում հեռացել են աշխարհից. չէ որ նույն ճանապարհով է անցնելու ամեն մի մարդկային էակ: Կյանքից հեռացողների նկատմամբ ան-

⁹ Նույն տեղում, էջ 22:

¹⁰ Նույն տեղում, էջ 21:

¹¹ Նույն տեղում, էջ 231:

¹² Հ. Քոսյան, Գերեզմանատուն Կաթողիկե հայոց Կ. Պոլսի, Վիեննա, 1931, էջ 169:

¹³ Հ. Քոսյան, Հայք ի Զմյուռնիա, հատ. Բ, Վիեննա, 1899, էջ 161:

¹⁴ «Ազգագրական հանդես», 1904, էջ 102:

¹⁵ Հ. Քոսյան, Հայք ի Զմյուռնիա, հատ. Բ, էջ 94:

տարբեր չպետք է լինեն նաև հետագա սե-
քունդները.

Տես ի ողորդ. ո՞վ բանական,
Մանիր զքեզ գերի մահուան.
Մի հայր մերի ողորմիս հան՝
Զի առ վաղի է քեզ պատկան,
Մահ ազնույս ձեզ ողբական¹⁶:

Կյանքը փոխադարձ կապի մեջ է. եթե այսօր
մեկը բարիք է գործում մյուսին, ապա վաղ թե
ուշ. եթե ոչ այս կյանքում, ապա հանդերձալ
կյանքում նա հատուցում կստանա դրա համար
մեկ ուրիշի կողմից: Այսինքն՝ բարին բարիով
է հատուցվում, չարը՝ չարով:

Թէ որ առնեք դուք ինձ բարի,
Այսօր ինձի, վաղն՝ ձեզի¹⁷:

Կամ՝

Երբ որ յիշես զիս ի բարին՝
Քու հոգւոյդ ալ կ'առնես բաժին¹⁸:

Որոշ դեպքում այցի եկողը ծանոթանում է
«անցաւոր» մարդու հոգեկան աշխարհին, նրա
մտորումներին:

Ով անցաւոր, ի՞նչ կը խորհիս,
Ինչպէս ցաւոտ մարմին ունիս.
Բոլոր մէկէն ահա անցաւ
Հիմակ վիճակ ունիմ անցաւ¹⁹:

Մի շարք տապանագրերում ողջներին խոր-
հուրդ է տրվում, որ նրանք դաս քաղեն կյան-
քից, որովհետև կյանքն ինքն իսկ խրատատու
մի ասպարեզ է, որով անցնելու են բոլորն
անխտիր, իսկական մարդը պետք է տոկա,
համբերի, քանի որ ինչպիսին էլ լինի երկրա-
յին կյանքը, չպետք է հուսահատվել, իսկական
կյանքը դեռ առջևում է, այն պետք է դեռ գա,
այն էլ՝ «հանդերձելում», այսինքն՝ մահից
հետո:

Մահկանացու, զմտաւ ած մի պահիկ,
Վաղանց ունայն են համայն բանք աշխարհի՝
Հանդերձելումն է լոկ կենցաղ իսկական²⁰:

16 Հ. Քոսյան, Բարձր Հայք, հատ. Ա,
էջ 108:

17 «Բազմավեպ», 1929, էջ 21:

18 Նույն տեղում, էջ 22:

19 Նույն տեղում:

20 Հ. Քոսյան, Բարձր Հայք, հատ. Ա,
էջ 292:

Աշխարհի ու կյանքի անցողիկ լինելու գաղա-
փարը և իսկական, մշտնջենական կյանքի գո-
յությունը հանդերձալ կյանքում փնտրող միտ-
քը փոքր-ինչ այլ կերպ է արտահայտված նաև
մի այլ բանաստեղծության մեջ.

Ով դու անցորդ, խորհէ մի վայրկյան՝
Վաղանցուկ է կեանք և աշխարհ ունայն
Ծշմարիտ կյանքն է երկնից մէջ²¹:

Կամ՝

Թող մահարձանս շմարէ ձեր խանթ,
Թող ձեզ արհաւիր չազդէ իրբեւ շանթ,
Այլ թող բորբոքէ ընդ միշտ ձեր աւին՝
Գործելու ի սէր, լաւին եւ բարւոյն²²:

Այսպիսով, վիճաբար բանաստեղծությունը
հորդորում է, որ մարդկային անհատից մնացած
թեկուզ տխուր հիշատակը մարդկանց մեջ արթ-
նացնի ապրելու և գործելու ձգտում և ոչ թե
ատելություն մարդի դեպի աշխարհն ու մարդը:

Մի այլ բանաստեղծության մեջ աշխարհին
հրաժեշտ տվողը, դիմելով սերունդներին, ան-
կեղծորեն խոստովանում է իր արարքները, լինի
դա բարի կամ չար: Նա իմաստավորված է հա-
մարում իր ապրած տարիները այն բանի հա-
մար, որ եղել է իսկական մարդ, կրել իսկական
մարդու անուն և որ կարևորն է՝ սրբությամբ
է կատարել իր հայրական պարտքը որդիների
հանդեպ:

Իրբեւ մարդ բարի լինիլ ջանացի,
Իրբեւ հայր՝ որդւոց ի սէր գործեցի,
Այսպէս վարելով կենացս շրջան՝
Գոհ սրտով կերթամ իմ վերին կայան²³:

Բանական մարդը վաղ թե ուշ իր վախճանը
զգալով և գիտակցելով չէ, որ պետք է մտահո-
գության մեջ ընկնի: Մահը սոսկ այնքանով
և այն ժամանակ է ցավ ու մտահոգություն
պատճառում, երբ սիրելիի մահից հետո մեղ-
ձավորը դեռ պետք է ապրի: Հարազատի կորստի
կսկիծը երկար ժամանակ տանջելու է ապրողին,
հետևապես, թշվառն ու անբախտը նա չէ, ով
մեռնում է, այլ նրա հարազատը, որն ապրելով
հանդերձ, պետք է թախծի իր ողջ կյանքում
սիրելիի կորստյան համար:

Զէ նա վատարախտ, որ վաղ մեռանի,
Այլ որ յետ մահուան սիրելւոյն՝ ապրի²⁴:

21 Նույն տեղում, էջ 303:

22 Նույն տեղում, էջ 300:

23 Նույն տեղում, էջ 310:

24 «Ազգագրական հանդես», 1836, էջ 316:

Այսպիսով, ինչպես ասվեց, բարոյախրատական տապանագրերում ընդգծվում է այն զաղափարը, որ մահն անխուսափելի է, որ մարդկային անհատը չպետք է միայն երկրային կյանքի մասին երազի, կամ էլ հակառակը՝ մոռանա երկրային կյանքը և ձգտի երկնային կյանքի։ Միջամանակ հիշեցվում է սերունդներին, որ մարդկային կյանքի տևողությունը որոշակի

սահման ունի, հուսադրում, խրախուսում է մարդկանց, որ նրանք չհուսալքվեն կյանքի անցավոր լինելուց, որ իսկական մարդու միակ նպատակը պետք է լինի բարի անուն ու հիշատակ, բարի գործ թողնել սերունդներին։

Ս. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՎՍՍՀ ԳԱ «ՄԱՅՆԵ» («ԼՐԱԲԵՐ») ՀԱՆԴԵՍԻ
ԿՈՎԿԱՍԱԳԻՏԱԿԱՆ-ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ¹

1979

«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ, ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇԱՐ»

№ 1

Գիտրգի Մելիքիշվիլի, Վրաց լեռնակառնների սոցիալ-տնտեսական կարգի բնութագրման շուրջ, 19—41:

Ք. Զիֆովանի, Ա. Քալիդանի, Ժամանակակից բնակելի տունը Մեմֆիս-Չալախրում (Վրաստանի պատմա-ազգագրական ատլասի համար), 42—55:

Г. Н. Чубинишвили, Л. М. Челидзе, К вопросу о некоторых определяющих признаках раннеземледельческой культуры. II. Ирак, Иран (Хозяйство в X—IV тыс. до н. э.) [սկիզբը՝ I. Южный Кавказ (Хозяйство в VI—IV тыс. до н. э.) տե՛ս «Մայնե», 1978, № 1] 56—72:

А. А. Барамидзе, К изучению научного наследия грузинского историка П. И. Иоселиани, 97—106:

Վախտանգ Գոթիաձե, VI դարում Քարթլիի տեղական պետականության վերականգնման թվագրման շուրջ (Գուարամի Քարթլիի իշխանաց իշխան «Հայտնվելը»), 107—123:

Գիվի Ախվիեղիանի, Զուանշերի «Վախտանգ Գորգասալի կյանքի» բանահյուսական աղբյուրները, 124—133:

Գիտրգի Մաքսազիշվիլի, Ազարի վանքի զանգակատունը, 134—149:

Էդիշեր Խոշտաբիա, Վրաց պատմական սկզբնաղբյուրների ոտներեն թարգմանության մասին, 150—171:

Отар Гугинишвили, Б. М. Понхверия, Внешняя политика Турции после второй мировой войны, издательство «Наука», М., 1976, 306 стр. [գրախոսություն], 172—174:

Նոդար Շենգելիա, Վրաստանի պատմության օսմանյան վավերագրային աղբյուրները Բուլղարիայի արխիվներում (գիտական գործուղման համառոտ հաշվետվություն), 190—196:

Ռեազ Թոդուա, Ռուանդ Թովիշվիլի, Ազգագրագետների և մարդաբանների գիտական նստաշրջան [հաղորդում 1978 թ. մարտի 20—24-ը ՎՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում տեղի ունեցած 1977 թ. ազգագրական դաշտային աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի մասին], 196—200:

№ 2

Ալի Ճկադուա, Սոցիալական գրությունը Սվանեթի իշխանությունում XIX դարի առաջին կեսին, 23—37:

¹ «Մայնե»-ի 1975—1977 թթ. և 1978 թ. համարների մատենագիտությունը տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1978, № 2, էջ 284—292 և «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 4, էջ 286—290, Հայերենի են թարգմանվում միայն վրացերեն հոդվածների վերնագրերը, որոնցից հետո տրվում են նրանց էջահամարները: